

Կ'ըսուի թէ մարդկային կեանքը տարուբերում մըն է Յոյսի եւ Վախի միջեւ, եւ անշուշտ ճակատագրականօրէն սխալ պիտի ըլլար մեզի համար տարուիլ մէկէն կամ միւսէն. որովհետեւ, Յոյսի պարագային՝ մենք միամտօրէն պիտի յանգէինք ինքնախաբէութեան, մինչ Վախի պարագային՝ մեր ձգտումը դէպի բարձրագոյն եւ ազնուագոյն նպատակի մը, պիտի անդամալուծուէր: Անտարակոյս, Յոյսը ունի ամէն հաւանականութիւն մեզի տալու աւելի փայլուն գաղափարներ քան Վախը, որ մարդը կը դարձնէ աւելի խոցելի, զայն վերածելով իր վախերուն ստրուկը: Աղեքսանդր Մակեդոնացի, իւրաքանչիւր արշաւանքէ առաջ, իր մտերիմ բարեկամներն ու բանակին զօրավարները իր մօտ կանչելով անոնց միջեւ կը բաժնէր իր ունեցած հարստութիւնն ու անձնական գոյքերը. ու երբ իրեն հարցուէր թէ ի՞նչ մնաց իրեն. կը պատասխանէր, «Յոյս»: Յոյսը՝ զաւակն է Հաւատքին. եւ ան՝ որուն հոգիին խորը անթեղուած է կրակը իրա՛ւ հաւատքին, կարիքը չի զգար Յոյսին:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Եթէ կ'ուզես Աստուծոյ ծիծաղը շարժել, պատմէ Անոր ծրագիրներուդ մասին:

Ուտի Ալէն

Երբ ամէն բան քեզի դէմ է, յիշէ՛ որ օդանաւը երկինք կը բարձրանայ միայն օդին դիմադրութեան շնորհիւ:

Հենրի Ֆորտ

Յաջողութիւնը կը նմանի սանդուխի՝ անհնար է բարձրանալ առանց ձեռքերը գրպանէն հանելու:

Ջիկ Ջիկլըր

Ժամացոյցին մի՛ նայիք, այլ ըրէք ինչ ան կ'ընէ՝ առաջ քալեցէք:

Սէմ Լեւենսոն

Ժամանակը այն է ինչ ամենաշատը կ'ուզենք ունենալ, սակայն կ'օգտագործենք ամենավատ կերպով:

Ուիլիըմ Փէն

Ան որ կը յաղթէ ուրիշները՝ զօրեղ է, ան որ կը յաղթէ ինքզինքին՝ ամենազօր:

Լաո Յզի

Յաջողութիւնը սովորաբար կու գայ այն ատեն, երբ չափազանց զբաղած ես այն փնտռելու համար:

Հենրի Տէյլիտ Թորո